ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/23» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան «01-ը» հունիսի 2018թ.
ժամը 15^{00}

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ աշխատակազմի ղեկավարի տեղակալ, ՔՀԾ 2-րդ դասի պետական խորհրդական Ս. Աբովյան,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ԶԲՖԿ ծառայության պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ա. Պապյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ն. Արշակյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Հ. Բաղալյան:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ռ.Մարդոյան:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/23» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ռ. Մարդոյան)

1. Բանակցությունների վարման մասին
2. 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթի քննարկման և ընտրված մասնակիցներին որոշման մասին.
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Բանակցությունների վարման մասին

(Ռ. Մարդոյան)

1.1 Հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետին բանակցություններին որևէ մասնակից չներկայացավ և առաջարկված գները թողնվեցին առանց փոփոխության:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին) հանձնաժողովը որոշեց 34-րդ չափաբաժնի մասով «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/23» ծածկագրով ընթացակարգը հայտարարել չկայացած, իսկ դրա մասով ներկայացված հայտերը գնահատել հրավերի պահանջներին անհամապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթի քննարկման և ընտրված մասնակիցներին որոշման մասին.

(Ռ. Մարդոյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/23» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված պահանջներին «Էքսպրես Շին», «Նարնիկ», «Ֆոտոն» ՍՊԸ-ների և Ա/Ձ Գրիգոր Այվազյանի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին: Քննարկելով «Մաֆարդայ» ՍՊԸ-ի կողմից որպես շտկում ներկայացված փաստաթղթերը՝ հանձնաժողովը դրանք գնահատեց հրավերի պահանջներին համապատասխան:

1.2 Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց 1-ին տեղ զբաղեցրած բոլոր մասնակիցների որակավորման հատկանիշները և ներկայացված տեխնիկական բնութագրերը գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/23» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին, վերջինիս հայտարարել ընտրված (հաղթող) մասնակիցներ այն չափաբաժիններում, որտեղ վերջիններս ճանաչվել էին 1-ին տեղ զբաղեցնող և անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/23» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

1.4 Հանձնաժողովն արձանագրեց, որ «Բեսթ Գրուպ», «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են լրացուցիչ տվյալներ՝ ժամկետանց հարկային պարտավորությունների բացակայության վերաբերյալ, իսկ «Սթիլ Կոնցեռն» ՍՊԸ-ի կողմից որևէ տվյալ չի ներկայացվել: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի պահանջները՝ հանձնաժողովը որոշեց «Սթիլ Կոնցեռն» ՍՊԸ-ի տվյալներն ուղարկել լիազորված մարմին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ռ. Մարդոյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/23» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրերի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11⁰⁰-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՔՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ) Ս. Աբովյան

Գնահատող Ա. Պապյան

Գնահատող Ն. Արշակյան

Գնահատող Հ. Բաղալյան

Գնումները համակարգող՝ Ռ. Մարդոյան